

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 02**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

23.02.2004թ.

ժ. 11.00

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Վ. Դանիելյան, Վ. Դավթյան, Յու. Պողոսյան, Հ. Պետրոսյան (*խորհրդի անդամներ*), Գ. Սարոյան (*խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Լ. Սիրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի տեղակալ*), Ա. Հայրապետյան (*ՀՀ ԱՎԾ աշխատակազմի ղեկավար*), Ջ. Սիրզոյան (*ՀՀ ԱՎԾ նախագահի գլխավոր խորհրդական*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ*), Վ. Սարոյան (*Իրավաբանական բաժնի պետ*), Ա. Սաֆյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Կ. Կույունջյան (*Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ*), Ա. Ավետիսյան (*Մարդահամարի և ժողովրդագրության բաժնի առաջատար մասնագետ*), Ջ. Մազլուչանց (*Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ*), Գ. Մարտիրոսովա (*Տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի գլխավոր մասնագետ*), Հ. Եղիազարյան (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի առաջատար մասնագետ*),

**Օրակարգի նախագծում` տասներկու հարց.**

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 29-ի «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» թիվ 17-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*/Ձեկուցող` Հ. Պետրոսյան/*

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն կոյուղու աշխատանքի մասին» ձև թիվ 1-կոյուղի պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 177-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*/Ձեկուցող` Ն. Բաղդասարյան/*

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն ջրմուղի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ջրմուղ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 178-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.

*/Ձեկուցող` Ն. Բաղդասարյան/*

4. «Բնակչության հաշմանդամության մասին» Ձև թիվ 1-հաշմանդամություն (կիսամյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին,

5. «Հանցագործությունների մասին» Ձև թիվ 1-հանցագործություն (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

6. «Մարդու ինունային անբավարարության վարակի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» Ձև թիվ 1-ՄԻԱՎ (եռամյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

7. «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 1-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

8. «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 2-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.
9. «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 3-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին.
10. «Կազմակերպությունների կողմից կատարված բնապահպանական ծախսերը» պետական վիճակագրական դիտարկման հարցաթերթը և լրացման հրահանգը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Բաղդասարյան/*

11. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

11.1 Հաշվետվություն 2003թ. հունվարի 13-ից դեկտեմբերի 30-ը Կահիրեի Ժողովրդագրական Կենտրոնում «Ընդհանուր ժողովրդագրություն» թեմայով դասընթացներին մասնակցելու վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Ա. Ավետիսյան/*

11.2 Հաշվետվություն 2004թ. հունվարի 12-14-ը «Եվրոպայի բնակչության համաժողով 2004թ. (EPF)»-ի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Կ. Կույումջյան/*

11.3 Հաշվետվություն 2004թ. հունվարի 21-23-ը Շվեդիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան, Ջ. Մազլուչանց, Դ. Մարտիրոսովա, Հ. Եղիազարյան/*

12. Այլ Հարցեր

12.1 Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2003 թվականի հաշվեկշիռը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ա. Հայրասպետյան/*

ՀՀ վիճակագրության պետական խորհրդի նախագահի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը, որի քննարկման ժամանակ Գ.Անանյանի կողմից առաջարկվեց նախագծից հանել թիվ 10 հարցը՝ հարցաթերթի լրամշակման և խմբագրման անհրաժեշտությամբ պայմանավորված: Խորհրդի նիստի նախագիծը հաստատվեց տաս հարցով:

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## Լսեցին՝

1. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 29-ի «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» թիվ 17-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

*/Ձեկուցող՝ Հ. Պետրոսյան/*

*Նշվեց, որ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 29-ի «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» թիվ 17-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելը միջազգային և տեղական փորձագետների կողմից այն վերանայելու արդյունք է:*

## Որոշեցին՝

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2003 թվականի դեկտեմբերի 29-ի «Տնային տնտեսությունների կենսամակարդակի ամբողջացված հետազոտության հարցաթերթը և օրագիրը հաստատելու մասին» թիվ 17-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. որոշմամբ հաստատված օրագրի Y.1. աղյուսակի.

- 1.1 2-րդ սյունակի կետ 6-ի համար տալ պարզաբանում հետևյալ բովանդակությամբ. «Երեխայի ծննդյան կապակցությամբ միանվագ նպաստ և մինչև 2 տարեկան երեխաների խնամքի համար տրվող նպաստ (աշխատող և գրանցված գործազուրկ մայրերի համար)»
- 1.2. 2-րդ սյունակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 8-րդ կետով. ««Այլ նպաստ» \_\_\_\_\_ նշել»
- 1.3. 5-րդ սյունակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 5-րդ կետով. «տարին երկու անգամ»
- 1.4. 5-րդ սյունակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 6-րդ կետով «տարին երեք անգամ»
- 1.5. 5-րդ սյունակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 7-րդ կետով «տարին չորս անգամ»
2. որոշմամբ հաստատված օրագրի Z.3. աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ.
- 2.1. 5-րդ սյունակով. «Եթե այո, որքան ժամանակ էք Դուք այն օգտագործում \_\_\_\_\_ տարի»
- 2.2 6-րդ սյունակով. «Համապատասխան ներկայիս շուկայական գների, որքանով կվաճառեք այդ ապրանքը»
- 2.3 7-րդ սյունակով. «Տարադրամ – 1. դրամ, 2. ռուբլի, 3. \$, 4. եվրո»
- 3 որոշմամբ հաստատված հարցաթերթը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր Գ.26. հարցով.

**Գ.26. Գնահատեք, խնդրեմ, ի՞նչ հեռավորության վրա է գտնվում Ձեր տնից ներքոթվարկյալները**

	Սպասարկման ոլորտի օբյեկտներ	մինչև 1 կմ	1 - 3 կմ	4 - 5 կմ	6 – 10 կմ	10 կմ և ավելի
1.	Դեղատուն					
2.	Համայնքի գրասենյակ					
3.	Մանկապարտեզ					
4.	Տարրական դպրոց					
5.	Միջնակարգ դպրոց					

*/Անհատական/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն կոյուղու աշխատանքի մասին» ձև թիվ 1-կոյուղի պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 177-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

*Նշվեց, որ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն կոյուղու աշխատանքի մասին» ձև թիվ 1-կոյուղի պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 177-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նշված հաշվետվությունը ներկայացնող վիճակագրական տեղեկություններ տրամադրողի փոփոխմամբ:*

**Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն կոյուղու աշխատանքի մասին» ձև թիվ 1-կոյուղի պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 177-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. որոշման հավելված 1-ով հաստատված «Կոյուղու աշխատանքի մասին»՝ ձև թիվ 1-կոյուղի (տարեկան) ամփոփ պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգի կետ 2-ում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն» բառերով:

2. որոշման հավելված 1-ով հաստատված «Ամփոփ հաշվետվություն կոյուղու աշխատանքի մասին»՝ ձև թիվ 1-կոյուղի պետական վիճակագրական հաշվետվությունում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն» բառերով:

*/Նորմատիվ/*

*/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

3. Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն ջրմուղի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ջրմուղ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 178-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:

*/Ձեկուցող՝ Յու. Պողոսյան /*

*Նշվեց, որ Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն ջրմուղի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ջրմուղ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 178-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է նշված հաշվետվությունը ներկայացնող վիճակագրական տեղեկություններ տրամադրողի փոփոխմամբ:*

### **Որոշեցին՝**

Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն ջրմուղի աշխատանքի մասին» ձև թիվ 1-ջրմուղ պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 178-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1. որոշման հավելված 1-ով հաստատված «Ջրմուղի աշխատանքի մասին»՝ ձև թիվ 1-ջրմուղ (տարեկան) ամփոփ պետական վիճակագրական հաշվետվության լրացման հրահանգի կետ 2-ում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն» բառերով:

2. որոշման հավելված 1-ով հաստատված «Ամփոփ հաշվետվություն ջրմուղի աշխատանքի մասին»՝ ձև թիվ 1-ջրմուղ պետական վիճակագրական հաշվետվությունում՝ «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի «Հայջրմուղկոյուղի» փակ բաժնետիրական ընկերությունը» բառերը փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն» բառերով:

*/Նորմատիվ/*

*/Բվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

4. «Բնակչության հաշմանդամության մասին» Ձև թիվ 1-հաշմանդամություն (կիսամյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

#### **Որոշեցին՝**

1. Հաստատել «Բնակչության հաշմանդամության մասին» Ձև թիվ 1-հաշմանդամություն (կիսամյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի ««Ամփոփ հաշվետվություն բնակչության հաշմանդամության մասին» Ձև թիվ 1-հաշմանդամություն պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 162-Ն որոշումը:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

5. «Հանցագործությունների մասին» Ձև թիվ 1-հանցագործություն (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

#### **Որոշեցին՝**

1. Հաստատել «Հանցագործությունների մասին» Ձև թիվ 1-հանցագործություն (ամսական) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության վիճակագրության պետական խորհրդի 2002 թվականի օգոստոսի 12-ի «Ամփոփ հաշվետվություն «Հանցագործությունների մասին» Ձև թիվ 1-հանցագործություն (ամսական) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին» թիվ 168-Ն որոշումը:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

6. «Մարդու իմունային անբավարարության վարակի վերաբերյալ հետազոտությունների արդյունքների մասին» Ձև թիվ 1-ՄԻԱՎ (եռամսյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

*Առաջարկվեց հաշվետվության անվանումը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Մարդու իմունային անբավարարության վիրուսի նկատմամբ շճաբանական հետազոտությունների արդյունքների մասին»:*

#### **Որոշեցին՝**

հաստատել «Մարդու իմունային անբավարարության վիրուսի նկատմամբ շճաբանական հետազոտությունների արդյունքների մասին» Ձև թիվ 1-ՄԻԱՎ (եռամսյակային) պետական վիճակագրական ամփոփ հաշվետվության ձևը և լրացման հրահանգը:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

7. «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 1-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

#### **Որոշեցին՝**

հաստատել «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 1-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

8. «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 2-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

**Որոշեցին՝**

հաստատել «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 2-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

9. «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 3-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը հաստատելու մասին:

*/Զեկուցող՝ Յու. Պողոսյան /*

**Որոշեցին՝**

հաստատել «Բնակարանային ֆոնդի մասին» Ձև թիվ 3-բնակֆոնդ (տարեկան) պետական վիճակագրական հաշվետվության ձևը և լրացման հրահանգը:

*/Նորմատիվ/*

*/Զվեարկության արդյունքները - կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

10. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

10.1 Հաշվետվություն 2003թ. հունվարի 13-ից դեկտեմբերի 30-ը Կահիրեի Ժողովրդագրական Կենտրոնում «Ընդհանուր ժողովրդագրություն» թեմայով դասընթացներին մասնակցելու վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Ա. Ավետիսյան/*

10.2 Հաշվետվություն 2004թ. հունվարի 12-14-ը «Եվրոպայի բնակչության համաժողով 2004թ. (EPF)»-ի աշխատանքներին մասնակցելու վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Կ. Կույումջյան/*

10.3 Հաշվետվություն 2004թ. հունվարի 21-23-ը Շվեդիայի վիճակագրական ծառայություն կատարած այցելության վերաբերյալ.

*/Ներկայացնող՝ Հ. Պետրոսյան, Զ. Մազուչանց, Գ. Մարտիրոսովա, Հ. Եղիազարյան/*

**Որոշեցին՝**

Հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

*/Արձանագրային/*

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

**11. Այլ Հարցեր**

11.1 Հայաստանի Հանրապետության ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2003 թվականի հաշվեկշիռը հաստատելու մասին.

*/Զեկուցող՝ Ա. Հայրապետյան/*

**Որոշեցին՝**

Հաստատել Հայաստանի Հանրապետության Ազգային վիճակագրական ծառայության աշխատակազմի 2003 թվականի հաշվեկշիռը՝ ըստ ծրագրերի.

1. Պետական կառավարման հանրապետական և տարածքային կառավարման մարմինների պահպանում (01.07.01) 01.01.03 - 01.01.04 ժամանակահատվածի համար

ԱԿՏԻՎ		ՊԱՍԻՎ	
1 Հիմնական միջոցներ	427004.5	1. Ֆինանսավորում, այդ թվում՝	26207.5
2. Նյութեր և պաշարներ	22329.4	<i>բյուջեից</i>	23445.1
3. Սակավարժեր և արագամաշ առարկաներ	27729.7	<i>այլ միջոցներ</i>	2762.4
4. Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-	2. Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	454734.2
5. Դրամական միջոցներ	-	3. Հաշվարկներ	702.7
6. Հաշվարկներ	4580.8	4. Արտադրանքի իրացում և եկամուտներ	-
7. Ծախսեր	-	5. Կապիտալ շինարարության Ֆինանսավորում	-
8. Վնասներ	-		
9. Կապիտալ շինարարության ծախսեր	-		
<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>	<b>481644.4</b>	<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>	<b>481644.4</b>

2. Պետական վիճակագրական տեղեկատվության հավաքագրում (01.07.04) 01.01.03 - 01.01.04 ժամանակահատվածի համար

ԱԿՏԻՎ		ՊԱՍԻՎ	
1 Հիմնական միջոցներ	26839.9	1. Ֆինանսավորում, այդ թվում՝	4648.7
2. Նյութեր և պաշարներ	3798.8	<i>բյուջեից</i>	4648.7
3. Սակավարժեր և արագամաշ առարկաներ	7094.3	<i>այլ միջոցներ</i>	
4. Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-	2. Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	33934.2
5. Դրամական միջոցներ	-	3. Հաշվարկներ	179.5
6. Հաշվարկներ	1029.4	4. Արտադրանքի իրացում և եկամուտներ	-
7. Ծախսեր	-	5. Կապիտալ շինարարության Ֆինանսավորում	-
8. Վնասներ	-		
9. Կապիտալ շինարարության ծախսեր	-		
<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>	<b>38762.4</b>	<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>	<b>38762.4</b>

3. ՀՀ-ում 2001թ.անցկացված մարդահամարի նյութերի մշակում, ամփոփում և

հրապարակում (01.07.05) 01.01.03 - 01.01.04 ժամանակահատվածի համար

ԱԿՏԻՎ		ՊԱՍԻՎ	
1 Հիմնական միջոցներ	182088.5	1. Ֆինանսավորում, այդ թվում՝	44501.3
2. Նյութեր և պաշարներ	43659.6	<i>բյուջեից</i>	33239.3
3. Սակավարժեք և արագամաշ առարկաներ	46339.8	<i>այլ միջոցներ</i>	11262.0
4. Ծախքեր արտադրության և այլ նպատակների	-	2. Ֆոնդեր և նպատակային նշանակման միջոցներ	228428.3
5. Դրամական միջոցներ	27.9	3. Հաշվարկներ	6.1
6. Հաշվարկներ	847.8	4. Արտադրանքի իրացում և եկամուտներ	27.9
7. Ծախսեր	-	5. Կապիտալ շինարարության Ֆինանսավորում	-
8. Վնասներ	-		
9. Կապիտալ շինարարության ծախսեր	-		
<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>	<b>272963.6</b>	<b>ՀԱՇՎԵԿՇԻՌ</b>	<b>272963.6</b>

*/Արձանագրային/*

*/Բվեարկության արդյունքները- կողմ՝ 7, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Գ. Սարոյան